ՀԱՆՈՒՆ ԳԱՂԹԱԿԱՆ ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ

Երևանում տեղի ունեցավ մի նոր հասարակական կազմակերպության՝ Ադրբեջանից գաղթած կանանց միության հիմնադիր կոնֆերանսը:

— Այս միությունը ստեղծվում է գաղթական կանանց խնդրանքով՝ նպատակ ունենալով պաշտպանել նրանց ոտնահարված սահմանադրական իրավունքներն ու սոցիալ-տնտեսական շահերը, ինչպես նաև նրանց օգնություն ցույց տալ ընտելանալու նոր պայմաններին,— կոնֆերանսում ունեցած ելույթում ասաց Հայաստանի կանանց խորհրդի նախագահ Ն. Հակոբյանը:— Այդ նախաձեռնությունը պաշտպանել է հանրապետության կինխորհրդի նախագահությունը: Միության գործունեության ծրագիրը բավական ընդարձակ կլինի, որը կներառնի զանազան ասպեկտներ, բայց ամենից առաջ կոնկրետ գործողություններ ու գործեր, բնակարանային պրոբլեմների և նրանց աշխատանքի տեղավորման հարցերի լուծում:

Ապա հրապարակվեց գաղթական կանանց միության կանոնադրությունը, որը միաձայն հաստատվեց կոնֆերանսի մասնակիցների կողմից: Առաջադրվեց այն հարցը, որ երկրի կառավարությունից պետք է պահանջել պաշտոնապես գաղթականի կարգավիճակ տալ Ադրբեջանից գաղթած հայ բնակչությանը: Քննարկվեց նաև Ադրբեջանից հեռանալ ցանկացող, բայց դրա համար հնարավորություններ չունեցող հայերին կազմակերպված օգնություն ցույց տալու, այն մարդկանց ունեցվածքը Ադրբեջանից փոխադրելու պրոբլեմը, ովքեր արդեն մեկնել են կամ մտադիր են մեկնել: Արծարծվեց նաև այն հարցը, որ գաղթականները պետք է սովորեն մայրենի լեզուն, քանի որ այդ հնարավորությունից փաստորեն զրկված են եղել Ադրբեջանում: Հիմա գաղթականների շտաբին առընթեր կազմակերպված է հայոց լեզվի անվճար դասավանդում չափահասների ու երեխաների համար:

Նոր հասարակական կազմակերպության անունից ընդունվեցին մի շարք դիմումներ՝ ուղղված վերադաս մարմիններին: Միահամուռ դատապարտվեց Ադրբեջանի կողմից Հայաստանի տնտեսական շրջափակման հանցավոր ակտը:

Կոնֆերանսում ընտրվեց միության գործադիր կոմիտե: Ադրբեջանից գաղթած կանանց միության նախագահ ընտրվեց Լ. Կալիյանը:

(Արմենպրես)